ԱՆՈՒՇ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԾԱՂԻԿԸ

(Հիշողություն հայրիկիս՝ Հովհաննես Թումանյանի կյանքից)

Մի հանգիստ ու խաղաղ լուսնյակ գիշեր էր: Հայրս և ես նստել էինք մեր կտրի վրա և զրույց էինք անում:

Գյուղացիները վաղուց ճրագները հանգցրել, խոր քուն էին մտել: Միայն քեռի Եղիկն էր, որ չէր քնել, իր շուրջն էր հավաքել սարից նոր իջած հոտը և սրինգ էր նվագում:

Ձորից լսվում էր Դև-քեդի խուլ ձենը, խառնվելով սրինգի քաղցր մեղեդիներին: Եվ էս մեղմ, քաղցր ու անուշ նվագի տակ նիրհում էր մեր չքնաղ Լոռին:

– Ի՜նչ քաղցր ու սիրուն է մեր Լոռին, հայրիկ: Ես ոչ մի տեղ ինձ էսպես մտերիմ, էսպես թեթև չեմ զգում, ինչպես էստեղ:

– Էդպես է, սիրուն ջան, հարազատը միշտ քաղցր է և սիրուն, առողջ ու պայծառ, ինչպես մեր Լոռվա սարերն ու ձորերը… Դուք էլ դեռ լավ չեք հասկանում ու զգում են հարազատ սերը, որով էսպես կապվել ու ձուլվել եմ ձեզ հետ:

Լուսինը բարձրացել և լուսավորում էր մեր տան առաջի արտերը: Քեռի Եղիկը շարունակում էր նվագը, հետզհետե ավելի տխուր և ավելի մելամաղձոտ: Մի ինչ-որ խաղաղ անդորրություն էր իջել մեր հոգու վրա: Հայրս իր գրկի մեջ առավ ինձ և սկսեց սպիտակ ծաղկի պատմությունը:

– Ամեն անգամ ձեզ գրկելիս, հիշում եմ իմ մանկությունից մի փոքրիկ դեպք, սպիտակ ծաղիկը, և իսկույն ականջիս է հնչում մորս ճիչը: Մի ճերմակ ծաղիկ էր էն ծաղիկը, որ բուսել էր ժայռի կրծքին և կանաչ խոտերի միջից դեպի ցած թեքված, մեղմիկ ճոճում, նազ էր

անում զեփյուռի հետ։

Ես խելագարի նման սիրեցի էն ծաղիկը, բայց նա շատ բարձր էր, ժայռի կրծքին։ Ես միշտ գնում էի ժայռի տակ կանգնում, նայում, հիանում ու զմայլվում։ Հոգիս լցվում էր նրա քաղցր բուրմունքով, քնքշանում, վերանում, ցրվում էի…

Էդ ժամերին հանկարծ լսվում էր մորս ձենը, ես ցնցվում, սթափվում էի և փախչում էնտեղից։ Նա գիտեր, որ ես սիրում էի էն ծաղիկը և միշտ հետևում էր ինձ, որ իրենից գաղտնի չբարձրանամ էնպիսի վտանգավոր տեղեր։

Բայց անզուսպ էր իմ մանկական հետաքրքրությունը… Մի օր էլ մորիցս թաքուն փախած՝ դարձյալ ժայռի տակ էի, աչքերս վեր սևեռած, սիրտս մի անբացատրելի կարոտով լիքը…

Էլ չդիմացա։

Մագլցելով, սկսեցի բարձրանալ դեպի վեր ու վեր, դեպի էն ճերմակ ծաղիկը։

Եվ էնպե՛ս եռանդով, էնպե՛ս ոգևորված էի բարձրանում։ Ինձ թվում էր, թե մի հարթ ու սովորական ճանապարհի վրա էի և չէի նկատում ո՛չ ժայռ, ո՛չ անդունդ, ո՛չ կախ ընկած քարեր։ Միայն ծաղիկն էր աչքիս երևում։

Ու բարձրանում էի դեպի վեր ու վեր։

Ահա սպիտակ ծաղիկը, նրա քաղցր բուրմունքը, մոտիկ եմ արդեն…

– Էդ ի՞նչ ես անում,– մի լեղապատառ ճիչ լսվեց ներքևից։

Մայրս էր, նա վախից հողի գույն էր ստացել։

– Ցա՛ծ արի, ցա՛ծ, վեր կընկնես,– կանչում էր մայրս դողդոջուն ձենով։

Ես վախեցած, տեղնուտեղը կպա ժայռին։

– Ցա՛ծ արի, ցա՛ծ, վեր կընկնես,– կանչում էր մայրս դողդոջուն ձենով։

Ես զգույշ ու կամաց սկսեցի իջնել։

Ա՛խ, էն ծաղիկը, էն ծաղիկը մնաց։

Անցել են արդեն շատ ու շատ տարիներ, հիմա ես էլ ունեմ շատ ու շատ ծաղիկներ, էն ծաղկից ավելի սիրուն ու քնքուշ, էն ծաղկից ավելի բուրավետ ու անուշ, որոնք տաքացնում և գեղեցկացնում են իմ կուրծքը։

Եվ ամեն անգամ ձեզ գրկելիս, երբ առաջս է գալիս էն սպիտակ ծաղիկը, և ականջիս հնչում է մորս ճիչը, ուրախանում եմ, որ չքողեց պոկեմ էն ծաղիկը ժայռի կրծքից…

Ասաց հայրս և ավելի սեղմեց ինձ իր կրծքին։

Երանի՜ բոլոր ծաղիկները թողնեն իրենց ժայռի կրծքին…